Կայքի
ծառայությունների մատուցման ստանդարտ պայմաններ

1. Տերմինների սահմանումներ

Բացառությամբ այն դեպքերի, երբ համատեքստն այլ բան է պահանջում կամ այլ կերպ է սահմանված **Համաձայնագրով**, սահմանված տերմիններն ունեն հետևյալ նշանակությունը՝

«HR Agency» - *«Էյչ Ար Էյջենսի» ՍՊԸ, ՀՎՀՀ՝ 08228335, հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0033, Արաբկիր, Կոմիտասի 59/7, բն. 50 (**Komitas 59/7/ apt. 50, Arabkir, 0033, Yerevan, Yerevan, Armenia**)*

Հաճախորդ - *ցանկացած ֆիզիկական անձ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ օտարերկրյա պետության օրենսդրության համաձայն գրանցված կամ առանց գրանցման ստեղծված անձ, որը միանում է սույն ծառայությունների մատուցման ստանդարտ պայմաններին Կայքում գրանցվելու և/կամ Համաձայնագիրը ստորագրելու միջոցով, և որի մասին տեղեկատվությունը ներկայացված է Համաձայնագրում և/կամ գրանցման արդյունքում հասանելի է դառնում «HR Agency»-ին*

Կողմ - *«HR Agency»-ն կամ Հաճախորդը՝ առանձին-առանձին, համատեքստին համապատասխան*

Կողմեր - *«HR Agency»-ն և Հաճախորդը՝ միասին*

Կայք - *ինտերնետային հասցե **www.HR.am,** որն առանց որևէ բացառության ներառում է, այդ թվում՝ դրա բովանդակությունը, տվյալների շտեմարանները, ծրագրային ապահովումը, կոդերը և գրաֆիկական տվյալները*

Հայտարարություն - *թափուր աշխատատեղ, թրեյնինգ, մրցույթ (տենդեր) կամ բովանդակությամբ նմանատիպ այլ տեքստ, որը Հաճախորդի պատվերի համաձայն տեղադրվում է Կայքում*

Ծառայության արժեք - *գումար, որը Հաճախորդը վճարում է «HR Agency»-ին Ծառայության դիմաց*

Ծառայությունների մատուցման ստանդարտ պայմաններ - Կայքի ծառայությունների մատուցման սույն ստանդարտ պայմանները

Համաձայնագիր - *համաձայնագիր ծառայությունների մատուցման հատուկ պայմանների վերաբերյալ, որի կնքումը պարտադիր չէ, սակայն լրացուցիչ պայմանների համաձայնեցման շրջանակում այն կարող է ժամանակ առ ժամանակ կնքվել «HR Agency»-ի և Հաճախորդի միջև*

Ծառայություն - *Տեղադրումը և CV-ների առցանց շտեմարանի ծառայությունը՝ միասին, իսկ առանձին-առանձին՝ համատեքստին համապատասխան*

Տեղադրում - *Հաճախորդի պատվերի համաձայն «HR Agency»-ի կողմից Հաճախորդի Հայտարարության տեղադրում և/կամ տարածում Կայքում՝ Տեղադրման պրոդուկտին կամ ծառայությունների փաթեթին համապատասխան*

CV-ների առցանց շտեմարանի ծառայություն - *«HR Agency»-ի կողմից Հաճախորդի պատվերի համաձայն Հաճախորդին CV-ների առցանց շտեմարանի տարբեր մակարդակի մուտքի տրամադրում՝ սույն Պայմանագրով սահմանված պայմաններին համապատասխան*

CV-ների առցանց շտեմարան - *ֆիզիկական անձանց CV-ների և ուղեկցող փաստաթղթերի ամբողջություն, որոնք ֆիզիկական անձանց կողմից վերբեռնվել են Կայք*

Պատվեր - *Պայմանագրին համապատասխան Հաճախորդի կողմից «HR Agency»-ին ներկայացված պահանջ կոնկրետ Ծառայության վերաբերյալ*

Պայմանագիր - *Պայմանագիրը և, համապատասխանաբար, միասնական գործարքը կազմում են Կայքի ծառայությունների մատուցման սույն ստանդարտ պայմանները՝ ներառյալ դրանց հավելվածները, այդ թվում՝ Կայքում տեղադրված Պրոդուկտը և Ծառայության արժեքը, Կայքում ժամանակ առ ժամանակ տեղադրվող այլ պայմաններ կամ կանոններ, որոնց Հաճախորդը միանում է գրանցման միջոցով, և առկայության դեպքում՝ ծառայությունների մատուցման հատուկ պայմանների վերաբերյալ Համաձայնագիրը, ցանկացած լրացում և/կամ փոփոխություն, որը կարող է ժամանակ առ ժամանակ կնքվել Կողմերի միջև և/կամ այլ կերպ հասանելի դառնալ*

Պրոդուկտ - *Տեղադրման պրոդուկտ կամ Համատեղ տեղադրման պրոդուկտ՝ միասին կամ առանձին-առանձին, համատեքստին համապատասխան*

Տեղադրման պրոդուկտ - *Կայքի ծառայությունների շրջանակում, Ծառայությունների մոդուլում, Հաճախորդի պատվերի համաձայն Հայտարարությունների տեղադրման համար հատկացված տարածքում կոնկրետ տեսակի Հայտարարության տեղադրում, որին անհատապես համապատասխանում է Ծառայության արժեքը, և որի մասին տեղեկատվությունը ներկայացված է www.HR.am-ում, մասնավորապես՝ hr.am/info/services*

Համատեղ տեղադրման պրոդուկտ - *Կայքի ծառայությունների շրջանակում, Կայքի Ծառայությունների մոդուլում, Հաճախորդի պատվերի համաձայն Հայտարարությունների տեղադրման համար հատկացված տարածքում կոնկրետ տեսակի Հայտարարության տեղադրում, որին անհատապես համապատասխանում է Ծառայության արժեքը, ինչպես ներկայացված է www.HR.am-ում*

Գրանցում - *գրանցում Կայքում, որը հնարավոր է www.HR.am-ում, մասնավորապես՝ hr.am/jobseeker/register*

I - Ընդհանուր մաս

Հոդված 1. Ընդհանուր դրույթներ, հայտարարություններ և երաշխիքներ

1. Եթե համատեքստն այլ բան չի պահանջում, եզակի թվով բառերը ներառում են հոգնակին և հակառակը, իսկ հոդվածների վերնագրերը միայն հեշտացնում են տեքստի ընթերցումը և չեն փոխում դրա բովանդակությունը:
2. Պայմանագրի կատարման վայրը «HR Agency»-ի իրավաբանական հասցեն է:
3. Պայմանագիրն ունի գերակայություն և չեղարկում է սույն Պայմանագրից առաջ կնքված ցանկացած պայմանագիր, գործարք կամ համաձայնություն՝ ինչպես

գրավոր, այնպես էլ բանավոր, որը վերաբերում է սույն Պայմանագրի առարկային և սույն Պայմանագրով կարգավորվող հարաբերություններին:
4. Կողմերը հաստատում են, որ ունեն Պայմանագիրը կնքելու պատշաճ լիազորություն: Ցանկացած անհրաժեշտ համաձայնություն, թույլտվություն պատշաճ կերպով ստացված է, և Կողմերը ձեռք են բերել անհրաժեշտ լիազորություն և հնարավորություն՝ կնքելու, պահպանելու և կատարելու նշված գործարքը:

Հոդված 2. Պայմանագրի առարկան
1. Պայմանագրի առարկան է Ծառայության արժեքի դիմաց «HR Agency»-ի կողմից Հաճախորդին՝ (ա) Տեղադրման և/կամ (բ) CV-ների առցանց շտեմարանի ծառայության մատուցումը՝ Պայմանագրով սահմանված պայմաններին և պահանջներին համապատասխան:
2. Ծառայությունը մատուցվում է Հաճախորդին, հետևաբար Հաճախորդը պարտավոր է անձամբ օգտվել Ծառայությունից:

Հոդված 3. Գրանցում
Ծառայություններ ստանալու համար Հաճախորդը պետք է գրանցվի Կայքում: Գրանցման պահանջները և պայմանները միակողմանիորեն սահմանում է «HR Agency»-ն, իսկ գրանցման բացակայությունը կարող է հանգեցնել Ծառայության կամ դրա մի մասի ստացման անհնարինության, ինչի համար «HR Agency»-ն չի կարող պատասխանատվություն կրել:

Հոդված 4. Պատվեր
Պատվերը հնարավոր է ինչպես էլեկտրոնային փոստի, այնպես էլ Կայքի միջոցով: Անկախ նշված դրույթից՝ «HR Agency»-ն իրավունք ունի միակողմանիորեն սահմանել պատվերի այլ կարգ՝ ինչպես ընդհանուր առմամբ, այնպես էլ կոնկրետ Պատվերի համար:

II - Տեղադրում

Հոդված 5. Տեղադրման առարկան
Տեղադրման շրջանակում «HR Agency»-ն Հաճախորդի պատվերի համաձայն տեղադրում է Հայտարարությունը Կայքում կամ Կայքի համապատասխան մոդուլում, որի տեղադրման ժամկետները, արժեքը կամ այլ պայմանները սահմանվում են «HR Agency»-ի կողմից միակողմանիորեն և/կամ որոշվում են Համաձայնագրով:

Հոդված 6. Տեղադրման կարգը
1. Կայքում տեղադրման Պատվերը «HR Agency»-ին ուղարկելով՝ Հաճախորդը «HR Agency»-ին իրավունք է տալիս հրապարակել (հանրությանը հասանելի դարձնել) նշված Հայտարարությունը՝ Հաճախորդի կողմից նշված չափանիշներին և/կամ տեքստին (առկայության դեպքում) համապատասխան:
2. Պատվերի շրջանակում «HR Agency»-ն Հաճախորդին կմատուցի միայն այն ծառայությունը, որը պատվիրել է Հաճախորդը: Պատվեր կատարելիս Հաճախորդը պարտավոր է «HR Agency»-ին ներկայացնել ամբողջական, համապարփակ, ճիշտ, իսկական և արդի տեղեկատվություն:
3. Պատվերը պետք է ներառի առնվազն՝ (ա) Հայտարարության բովանդակությունը, (բ) տեղադրման ժամանակահատվածը, որը չպետք է գերազանցի կոնկրետ Պրոդուկտի համար սահմանված ժամանակահատվածը, (գ) ընտրված կոնկրետ Տեղադրման պրոդուկտը կամ Համատեղ տեղադրման պրոդուկտը և (դ) տեղադրման ալիքների վերաբերյալ տեղեկատվությունը:
4. Եթե Պատվերում նախատեսված չէ տեղադրման ամսաթիվը, ենթադրվում է, որ Հայտարարությունը կտեղադրվի Պատվերը ստանալուց հետո նվազագույն ողջամիտ ժամկետում, իսկ դրա գործողության ստանդարտ ժամկետը կլինի կոնկրետ Պրոդուկտի համար սահմանված ժամկետը:

5. Անվավեր է այն Պատվերը, որը վերաբերում է գոյություն չունեցող Պրոդուկտի կամ որում Պրոդուկտը նշված չէ, բացառությամբ այն դեպքի, երբ «HR Agency»-ն Հաճախորդին հնարավորություն է տալիս ճշտելու Պրոդուկտը:

Հոդված 7. Կողմերի երաշխիքները

1. Հաճախորդը գիտակցում և համաձայնում է, որ՝
   (ա) Տեղադրումն իրականացվում է Կայքում Հայտարարությունը հրապարակելու միջոցով այնպես, որ Հայտարարության տեքստը և բովանդակությունը հանրությանը հասանելի են՝ Պայմանագրին, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և Կայքի առանձնահատկություններին համապատասխան.
   (բ) լիովին պատասխանատու է իր կողմից տրամադրված Հայտարարության բովանդակության համար և պարտավոր է հատուցել տրամադրված Հայտարարության հրապարակմամբ պատճառված ցանկացած տեսակի վնաս, ինչպես նաև պատասխանատվություն կրել ցանկացած տուգանքի և/կամ վարչական վարույթի համար, որը կարող է առաջացնել Հայտարարությունը կամ դրա հրապարակումը.
   (գ) «HR Agency»-ն պարտավոր չէ ուսումնասիրել և վերլուծել Հայտարարությունը և դրա բովանդակությունը, և դրա համար ամբողջությամբ պատասխանատու է Հաճախորդը:
2. Տեղադրումը «HR Agency»-ի բացառիկ իրավասությունն է: Հաճախորդի կողմից սույն ծառայությունների մատուցման ստանդարտ պայմանների, Հայաստանի Հանրապետության օրենսդրության, բնականոն գործարար էթիկայի հետ ցանկացած անհամապատասխանությունը կամ դրանց խախտումը կարող է հանգեցնել Ծառայության մերժման կամ նրա առկա Հայտարարության հեռացման (ջնջման) Կայքից:

Հոդված 8. Ծառայությունների մոդուլ

1. Ծառայությունների մոդուլը Կայքում հատկացված տարածք (տեղ) է, որտեղ «HR Agency»-ն Հաճախորդի պատվերի համաձայն, ընտրված Տեղադրման պրոդուկտի շրջանակում և համապատասխան Ծառայության արժեքի դիմաց, իրականացնում է Տեղադրումը՝ սույն ծառայությունների մատուցման ստանդարտ պայմաններին համապատասխան:
2. Ծառայությունների մոդուլը բաժանված է Տեղադրման պրոդուկտների, որոնց համապատասխանում է Ծառայության արժեքը, և որոնց մասին մանրամասն տեղեկատվությունը, այդ թվում՝ Ծառայության արժեքը, ներկայացված է Կայքում, մասնավորապես՝ *hr.am/info/services*

Հոդված 9. Ազատ տարածք

1. Ազատ տարածքը Կայքի այն տարածքն է, որը գոյություն ունի Տեղադրման պրոդուկտներից դուրս և ազատ է ցանկացած միջնորդավճարից կամ վճարից, որտեղ Հաճախորդը կարող է անձամբ իրականացնել Տեղադրում՝ սույն ծառայությունների մատուցման ստանդարտ պայմաններին համապատասխան:
2. Անթույլատրելի է Հայտարարության կրկնօրինակումը և դրա կրկնակի տեղադրումը, եթե այն արդեն տեղադրված է Ազատ տարածքում, և դրա վերջնաժամկետը լրացած չէ:

Հոդված 10. Հայտարարության բովանդակությունը, սահմանափակումներ

1. Հաճախորդը պատասխանատու է Հայտարարության բովանդակության համար, և «HR Agency»-ի վրա չի կարող դրվել որևէ պատասխանատվություն, այդ թվում՝ վնասի հատուցում, Հայտարարության բովանդակության հետ կապված:
2. Պատվերի շրջանակում Հաճախորդի կողմից տրամադրված Հայտարարության բովանդակությունը՝
   - պետք է պարունակի Հաճախորդի կոնտակտային տվյալները
   - չպետք է լինի խտրական, վիրավորական, գռեհիկ և/կամ սպառնալիք պարունակող

- չպետք է նպատակ ունենա տարածել այնպիսի տեղեկատվություն, որը վնասում է «HR Agency»-ի կամ այլ երրորդ անձի գործարար համբավը
- չպետք է խախտի երրորդ անձի մտավոր սեփականության իրավունքը
- չպետք է պարունակի կեղծ տեղեկատվություն և չպետք է ծառայի ոչ իրավաչափ նպատակի հասնելուն
- չպետք է հակասի Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և ընդունված գործարար էթիկային

3. «HR Agency»-ն իրավունք ունի մերժել ցանկացած Հայտարարության հրապարակումը, եթե Հայտարարության բովանդակությունը չի համապատասխանում սույն հոդվածի 2-րդ կետով սահմանված մեկ կամ մի քանի դրույթի:
4. Արգելվում է ցանցային մարքեթինգի Հայտարարությունների հրապարակումը, բացառությամբ այն դեպքերի, երբ Հաճախորդը նախապես տեղեկացրել է «HR Agency»-ին, և համապատասխանաբար նման Տեղադրումը գիտակցված է և թույլատրված «HR Agency»-ի կողմից:

Հոդված 11. Տարածման ալիքների, Պրոդուկտի և Ծառայության արժեքի փոփոխություններ

1. «HR Agency»-ն իրավունք ունի ցանկացած ժամանակ փոխել Հայտարարության տարածման ալիքները, ավելացնել նոր Պրոդուկտ և/կամ չեղարկել առկա Պրոդուկտը, փոխել Ծառայության արժեքը, ինչը չի պահանջում Հաճախորդին ծանուցում: Ընդ որում, փոփոխությունը չի վերաբերում ընթացիկ Պատվերներին:
2. «HR Agency»-ն իրավունք ունի իր նախաձեռնությամբ, անկախ ընտրված Պրոդուկտից, Հայտարարությունը տարածել լրացուցիչ տարածման ալիքների միջոցով:

III – CV-ների առցանց շտեմարանի ծառայություն

Հոդված 12. CV-ների առցանց շտեմարանի ծառայության առարկան

CV-ների առցանց շտեմարանի ծառայության շրջանակում «HR Agency»-ն Հաճախորդի պատվերի համաձայն տրամադրում է մուտք CV-ների առցանց շտեմարան, որի մուտքը, ժամկետները, արժեքը և այլ պայմանները սահմանվում են «HR Agency»-ի կողմից միակողմանիորեն, և որոնց մասին տեղեկատվությունը ներկայացված է www.HR.am Կայքում, մասնավորապես՝ հետևյալ հասցեով՝ ----------

Հոդված 13. CV-ների առցանց շտեմարանի ծառայության մատուցման կարգը

1. CV-ների առցանց շտեմարանի ծառայության Պատվերը «HR Agency»-ին ուղարկելու դեպքում «HR Agency»-ն իրավունք ունի Հաճախորդին տրամադրել CV-ների առցանց շտեմարանի տարբեր տեսակի սահմանափակ կամ լիարժեք մուտք՝ նախապես որոշված ժամկետով և/կամ ծավալով, «HR Agency»-ի կողմից սահմանված պայմաններին համապատասխան:
2. Պատվերի շրջանակում «HR Agency»-ն Հաճախորդին կմատուցի միայն այն ծառայությունը, որը պատվիրել է Հաճախորդը, Ծառայության սահմաններում: Պատվեր կատարելիս Հաճախորդը պարտավոր է «HR Agency»-ին ներկայացնել ամբողջական, համապարփակ, ճիշտ, իսկական և արդի տեղեկատվություն:
3. Պատվերը պետք է ներառի առնվազն ընտրված Պրոդուկտը և CV-ների առցանց շտեմարանի ծառայության մեկնարկի ամսաթիվը:

Հոդված 14. CV-ների առցանց շտեմարանից օգտվելու նպատակը

1. CV-ների առցանց շտեմարանից օգտվելը, անկախ մուտքի մակարդակից, հնարավոր է միայն որոշակի նպատակով, մասնավորապես՝ Հաճախորդի կողմից սեփական հաստիքային միավորների համալրման համար, ինչը պետք է իրականացվի ողջամիտ ժամկետում, հետևաբար շտեմարանի և/կամ շտեմարանից

ստացված տեղեկատվության այլ նպատակով օգտագործումն արգելվում է: Ցանկացած կասկած բացառելու համար՝ CV-ների առցանց շտեմարանի միջոցով ստացված փաստաթղթերի և/կամ տեղեկատվության նկատմամբ ամբողջ ծավալով տարածվում են սույն ծառայությունների մատուցման ընդհանուր պայմանների 24-րդ հոդվածով *(Հաճախորդի տեղեկատվություն, գաղտնիություն և անձնական տվյալներ)* սահմանված պահանջները:

2. CV-ների առցանց շտեմարանից օգտվելիս հասանելի փաստաթուղթը և փաստաթղթում առկա ցանկացած տեղեկատվություն կամ տվյալ «HR Agency»-ի սեփականությունը չեն, ստացված չեն անմիջապես «HR Agency»-ից, այլ ձեռք են բերված Կայքից՝ ֆիզիկական անձանց կողմից վերբեռնման արդյունքում, հետևաբար «HR Agency»-ն չի կարող պատասխանատու լինել փաստաթղթի բովանդակության, ցանկացած տվյալի, տեղեկատվության և/կամ փաստի ճշտության և/կամ հավաստիության համար:

IV – Ընդհանուր մաս

Հոդված 15. Ծառայությունների մատուցման հիմնական պայմանները

1. Ծառայությունը մատուցվում է «HR Agency»-ի կողմից սահմանված կանոններով և միջոցներով: Ծառայության ավարտից առաջ Հաճախորդի կողմից Ծառայությունից հրաժարվելու դեպքում «HR Agency»-ն իրավունք ունի նրանից պահանջել միայն փաստացի պատվիրված Ծառայության արժեքի վճարումը՝ անկախ այն բանից, թե Հաճախորդն ամբողջությամբ, թե մասնակիորեն է օգտվել կոնկրետ Ծառայությունից:

2. Ծառայության հետ կապված ցանկացած օֆերտա, առաջարկ կամ առաջարկություն, եթե այլ բան ուղղակիորեն սահմանված չէ, ստանդարտ կերպով գործում է տասը օրացուցային օրվա ընթացքում, որից հետո կորցնում է ուժը:

Հոդված 16. Վճարումներ

1. Ծառայության արժեքը (ներառյալ ԱԱՀ) տեղադրված և հասանելի է www.HR.am-ում, մասնավորապես՝ hr.am/info/services

2. Ծառայության արժեքը վճարվում է անկանխիկ եղանակով:

3. Տեղադրման ծառայության արժեքը Հաճախորդը վճարում է Պատվերն ուղարկելուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում, իսկ CV-ների առցանց շտեմարանի ծառայության վճարումը կատարվում է կանխավճարով, բացառությամբ այն դեպքի, երբ Կողմերն այլ կերպ են պայմանավորվում:

4. Ծառայության արժեքի ուշացված վճարման դեպքում «HR Agency»-ն իրավունք ունի ժամանակավորապես կասեցնել / հետաձգել Հաճախորդի ինչպես չվճարված, այնպես էլ ցանկացած այլ ընթացիկ ծառայություն, իսկ «HR Agency»-ի կողմից վճարման լրացուցիչ պահանջ ուղարկելուց հետո սահմանված ժամկետում չվճարելու դեպքում «HR Agency»-ն իրավունք ունի չեղարկել (դադարեցնել) Հաճախորդին ցանկացած տեսակի ծառայության մատուցումը:

5. Ցանկացած կասկած բացառելու համար՝ ծառայության կասեցման / հետաձգման և/կամ չեղարկման (դադարեցման) դեպքում Հաճախորդը պարտավոր է ամբողջությամբ վճարել ստացված ծառայության արժեքը: Այն անհապաղ չվճարելու դեպքում «HR Agency»-ն իրեն իրավունք է վերապահում չվճարված գումարի վրա հաշվարկել տուժանք՝ իր հայեցողությամբ և օրենսդրությամբ սահմանված ձևով ու հնարավոր չափով:

Հոդված 17. Ծառայության վերավաճառք

Հաճախորդի կողմից ցանկացած ծառայության վերավաճառքն արգելվում է, բացառությամբ այն դեպքի, երբ դա նախապես և գրավոր թույլատրված է «HR Agency»-ի կողմից:

Հոդված 18. Պատասխանատվության բացառում

1. Եթե որևէ Հաճախորդ «HR Agency»-ին ներկայացնի պահանջ, հայց հարուցի կամ այլ կերպ պահանջի որևէ տեսակի հատուցում կամ փոխհատուցում, «HR

Agency»-ի պատասխանատվությունը չի կարող գերազանցել Հաճախորդի կողմից կոնկրետ Ծառայության համար վճարված գումարը:
2. Ոչ մի դեպքում «HR Agency»-ն չի կարող պատասխանատու լինել որևէ ուղղակի կամ անուղղակի վնասի համար, որը կարող է բխել բաց թողնված օգուտից, եկամտից և/կամ տոկոսային եկամտից:

Հոդված 19. Ծառայության անընդհատությունը և պաշտպանվածությունը
«HR Agency»-ն չի կարող երաշխավորել, որ՝ (ա) Ծառայությունը կլինի հասանելի և անընդհատ ցանկացած ժամանակ, և (բ) Կայքը և/կամ CV-ների առցանց շտեմարանը պաշտպանված կլինեն սխալներից, վիրուսներից և/կամ այլ վնասակար հավելվածներից: Հաճախորդը պարտավոր է սեփական համակարգիչը և այլ սարքերը պաշտպանել ցանկացած վիրուսից և վնասակար ծրագրից, և դրա համար պատասխանատվությունը չի կարող դրվել «HR Agency»-ի վրա:

Հոդված 20. Ծառայության կասեցում և դադարեցում
«HR Agency»-ն իրավունք ունի ցանկացած ժամանակ, առանց որևէ նախնական ծանուցման, կասեցնել և/կամ դադարեցնել Ծառայությունը՝ ինչպես անհատապես, այնպես էլ ընտրողաբար, որևէ Հաճախորդի կամ Հաճախորդների խմբի կամ կոնկրետ Հայտարարության նկատմամբ՝ առանց պատճառները բացատրելու, և այդ դեպքում այն ազատ կլինի ցանկացած տեսակի պատասխանատվությունից:

Հոդված 21. Ծառայության չեղարկում
1. «HR Agency»-ն իրավունք ունի իր հայեցողությամբ միակողմանիորեն չեղարկել ցանկացած Պատվեր, եթե առկա է հետևյալ պայմաններից որևէ մեկը՝

- Հաճախորդը նրան չի տրամադրել ճիշտ կոնտակտային, ընկերության վերաբերյալ կամ այլ տեղեկատվություն
- «HR Agency»-ն կհամարի, որ Հաճախորդը գործում է ոչ իրավաչափ կամ անօրինական
- Հաճախորդը չի անցնի «HR Agency»-ի ստուգման գործընթացը և/կամ կուշացնի ցանկացած ծառայության արժեքի վճարումը
- Հաճախորդը վերավաճառում է Հայտարարություններ առանց «HR Agency»-ի նախնական գրավոր համաձայնության
- CV-ների առցանց շտեմարանի մուտքը փոխանցում է ցանկացած երրորդ անձի
- կհամարի, որ ցանկացած Պատվեր անօրինական է, անհամապատասխան կամ խարդախ
- որտեղ ուղղակի կամ անուղղակի պահանջվում է դիմումի կամ գրանցման վճար
- որտեղ գովազդվում են ֆինանսական բուրգեր, ցանցային մարքեթինգ կամ արագ հարստացման սխեմաներ
- Հայտարարություն, որը գովազդում է կայքեր, ծառայություններ, բիզնեսներ, բիզնես հնարավորություններ և/կամ պայմանագրային պայմաններ

Հոդված 22. Մտավոր սեփականություն
Ծառայության և Կայքի հետ կապված մտավոր սեփականությունը պատկանում է «HR Agency»-ին կամ այն երրորդ անձին, որի սեփականությունը կարող է այն լինել: Հաճախորդն իրավունք չունի իրականացնել մտավոր սեփականության օբյեկտ հանդիսացող ցանկացած նյութի վերարտադրում, պատճենում, խմբագրում, վերամշակում, հրապարակում, փոխանցում, տարածում կամ այլ կերպ առևտրային օգտագործում:

Հոդված 23. Անհաղթահարելի ուժ (ֆորս-մաժոր)
Կողմերն ազատվում են պարտավորությունների չկատարման կամ ոչ ժամանակին կատարման համար պատասխանատվությունից, եթե դա պայմանավորված է անհաղթահարելի ուժի (ֆորս-մաժորային) հանգամանքներով:

Հոդված 24. Հաճախորդի տեղեկատվություն, գաղտնիություն և անձնական տվյալներ

1. «HR Agency»-ն իրավունք ունի ստանալ, մշակել և պահպանել Հաճախորդի տեղեկատվությունը, որը նրան հասանելի է դարձել Պայմանագրի շրջանակում, նրան ծառայություն մատուցելու, Պայմանագրի կատարման և օրենսդրության, այդ թվում՝ հարկային օրենսդրության նպատակներով:
2. Յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է խստորեն պահպանել մյուս Կողմից ստացված ֆինանսական, առևտրային և այլ տեսակի տեղեկատվության գաղտնիությունը: Նման տեղեկատվության փոխանցումը երրորդ անձանց հնարավոր է միայն մյուս Կողմի գրավոր համաձայնությամբ, Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և սույն հոդվածի հաջորդ կետերով սահմանված պայմաններին համապատասխան:
3. Առանց որևէ սահմանափակման Կողմերի գաղտնի տեղեկատվությունը կարող է բացահայտվել և/կամ փոխանցվել վերահսկող մարմնին, արտաքին աուդիտի և հարկային աուդիտի նպատակներով ներգրավված ընկերություններին, իրավաբանական ընկերություններին, որոնք համապատասխան ծառայության շրջանակում լիազորված կլինեն ստանալու, ծանոթանալու և պահպանելու ծառայության իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվությունը:
4. Հաճախորդը գիտակցում է, որ ցանկացած տեղեկատվություն, որը ստանում է անմիջապես «HR Agency»-ից և/կամ որը նրան հասանելի է դառնում Ծառայության շրջանակում ցանկացած անձի վերաբերյալ, գաղտնի տեղեկատվություն է, և դրա բացահայտումը, փոխանցումը երրորդ անձանց անթույլատրելի է:
5. Հաճախորդը պարտավոր է պաշտպանել գաղտնի տեղեկատվությունը, անձնական, հատուկ կատեգորիայի և/կամ կենսաչափական տվյալները և ձեռնարկել ողջամիտ միջոցներ՝ դրանց բացահայտումը կամ երրորդ անձանց կողմից նման գաղտնի տեղեկատվությանը մուտքը կանխելու համար: Այդ նպատակով Հաճախորդը ստացված գաղտնի տեղեկատվությունը և տվյալները կպաշտպանի առնվազն նույն աստիճանի պաշտպանությամբ և զգուշությամբ, որը նա սովորաբար կիրառում է սեփական գաղտնի տեղեկատվությունը պաշտպանելու համար: Հաճախորդը գաղտնի տեղեկատվությունը կպահի անվտանգ միջավայրում, չի բազմացնի, չի բացահայտի և չի օգտագործի այն, բացառությամբ «HR Agency»-ի կողմից մատուցվող Ծառայությունը ստանալու նպատակի:
6. Հաճախորդը գիտակցում է, որ ցանկացած անձի անձնական և/կամ հատուկ կատեգորիայի տվյալը, որը նա կարող է ստանալ Ծառայության շրջանակում, կարող է մշակվել միայն կոնկրետ նպատակով: Հետևաբար Հաճախորդը պարտավորվում է չմշակել *(չհավաքել, չգրանցել, չպահպանել, չօգտագործել, չփոխանցել, չտարածել կամ այլ կերպ հասանելի չդարձնել)* վերոնշյալ տվյալները, բացառությամբ միանվագ մշակման այն նպատակով, որի համար դրանք ստացվել են, և ոչնչացնել դրանք նման պահանջն ստանալուն պես, Ծառայությունն ստանալուց հետո ողջամիտ ժամկետում և/կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում:

Հոդված 25. Իրավահաջորդություն

Պայմանագրից բխող իրավունքներն ու պարտավորությունները տարածվում են իրավահաջորդների վրա:

Հոդված 26. Անվավերություն

Պայմանագրի որևէ հոդվածի և/կամ կետի և/կամ ենթակետի կամ դրա մասի անվավերությունը չի հանգեցնում այլ հոդվածների կամ կետերի անվավերության, հետևաբար մնացած հոդվածները, կետերը և ենթակետերը պահպանում են իրենց ուժը:

Հոդված 27. Պայմանագրի ուժի մեջ մտնելը և գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Հաճախորդի կողմից Կայքում գրանցվելու պահից և/կամ Կողմերի կողմից Համաձայնագիրը ստորագրելու պահից, և դրա գործողությունը շարունակվում է Համաձայնագրով սահմանված ժամկետով և/կամ

մինչև գրանցման չեղարկումը և Կողմերի կողմից պարտավորությունների ամբողջական և պատշաճ կատարումը:

Հոդված 28. Միասնական պայմանագիր, փոփոխություններ և լրացումներ, գերակայություն

1. Ծառայությունների մատուցման ստանդարտ պայմանները, դրանց ցանկացած հավելված, այդ թվում՝ Կայքում տեղադրված Պրոդուկտը և Ծառայության արժեքը, Գրանցումը և առկայության դեպքում՝ ծառայությունների մատուցման հատուկ պայմանների վերաբերյալ Համաձայնագիրը կազմում են միասնական գործարք:
2. «HR Agency»-ն իրավունք ունի միանձնյա, միակողմանի որոշման հիման վրա ամբողջությամբ կամ մասնակիորեն փոփոխել և/կամ լրացնել ծառայությունների մատուցման ստանդարտ պայմանները, դրանց ցանկացած հավելված, այդ թվում՝ Կայքում տեղադրված Պրոդուկտը և Ծառայության արժեքը, Գրանցման կարգի պայմանները: Փոփոխությունը և/կամ լրացումը վերաբերում է միայն փոփոխությունից և/կամ լրացումից հետո կատարված Պատվերներին:
3. Վերոնշյալ փոփոխությունների և/կամ լրացումների մասին տեղեկատվությունը Հաճախորդին հասանելի կդառնա փոփոխությունների և/կամ լրացումների վերաբերյալ տեղեկատվությունը Կայքում տեղադրելու միջոցով:
4. «HR Agency»-ն կարող է փոփոխությունները Հաճախորդին ուղարկել իրեն հայտնի էլեկտրոնային հասցեով: Նոր, փոփոխված և/կամ լրացված պայմաններն ուժի մեջ են մտնում անմիջապես, բացառությամբ այն դեպքի, երբ «HR Agency»-ի կողմից այլ բան է սահմանվում, սակայն չեն տարածվում ընթացիկ, փոփոխությունների և/կամ Պատվերի ուժի մեջ մտնելուց առաջ առկա Պատվերների վրա:
5. Ցանկացած փոփոխություն և/կամ լրացում Կայքի մասով ուժի մեջ է մտնում «HR Agency»-ի կողմից Կայքում դրա տեղադրմանը հաջորդող աշխատանքային օրը, իսկ Համաձայնագրի մասով՝ այն գրավոր կնքելուն պես:
6. Ծառայությունների մատուցման սույն ընդհանուր պայմաններն ունեն գերակա իրավաբանական ուժ նախկինում կնքված բոլոր այլ համանման պայմանագրերի կամ գործարքների նկատմամբ:

Հոդված 29. Ծանուցումներ և հաղորդակցություն

Էլեկտրոնային հաղորդակցության դեպքում, այդ թվում՝ Համաձայնագրի սկանավորված տարբերակի փոխանակման, Պատվեր կատարելու, նամակագրություն վարելու կամ այլ հաղորդակցության ժամանակ, Կողմերն օգտագործում են՝ «HR Agency»-ի դեպքում՝ կորպորատիվ էլեկտրոնային հասցեները, իսկ Հաճախորդը՝ Համաձայնագրով սահմանված, Կայքում գրանցված կամ «HR Agency»-ին այլ կերպ տրամադրված էլեկտրոնային հասցեն:

Հոդված 30. Կիրառելի իրավունք

1. Պայմանագիրը կազմված է Հայաստանի Հանրապետության գործող իրավունքին համապատասխան, և դրա վրա տարածվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:
2. Պայմանագրով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 31. Վեճեր և դրանց լուծման կարգը

Կողմերի միջև ծագած ցանկացած վեճ լուծվում է փոխադարձ բանակցությունների միջոցով: Համաձայնության չգալու դեպքում վեճը քննում է Հայաստանի Հանրապետության իրավասու դատարանը:

Հոդված 32. Լեզուն և օրինակները

1. Համաձայնագիրը պետք է կազմվի հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից հայերեն լեզվով այնպես, որ յուրաքանչյուր օրինակ հանձնվի Կողմերին:
2. Եթե Պայմանագրի մասնակից կողմերից մեկը չի տիրապետում հայերեն լեզվին և/կամ գրին, Պայմանագիրը կարող է կազմվել և կնքվել նրա համար հասկանալի

լեզվով: Պայմանագրի թարգմանության առնչությամբ գերակա իրավաբանական ուժ ունի հայերեն տարբերակը, և ցանկացած պարզաբանման կամ մեկնաբանման ժամանակ կիրառվում է Պայմանագրի հայերեն տարբերակը: